

2865

Prickly pear cactus

Spiny milk

May 1912

206.1
P-15

29.08.2013

ԳՄԿ
ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ

23 SEP 2009

Կ. ԳՈՒՍՈՅ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

1912 Մայիս 1ին



Կ. ԳՈՂԻԱ

-ՏՊԱԳՐ. Տ. ՏՕԴՐԱՄԱՃԵԱՆ

1912

206.1
Բ-15

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿ
ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ



ՈՎՀԱՆՆԷՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍ-
ՏՈՒԾՈՑ ՀՕՐ ԵՒ ԵՆՈՐՀԻՒ Ս. ՀՈԳ-
ԻՈՅՆ ԵՒ ԿԱՄՕԲ ԱԶԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Կ.
ՊՈԼՍՈՑ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԿԻՈՑ,
Պատ. Դիւանին Ընդհ. Ժողովոյ Քահա-
նայից Միութեան մայրաքաղաքիս Կ.
Պոլսոյ, եւ Հոգեշնորհ անդամոց նորին,
սիրելեաց մերոց ի Քրիստոս, ողջոյն, սէր
եւ օրհնութիւն ի Տէր մեր:

Ընկալաք զգիր նորակազմ Ընդհ.
Ժողովոյդ զգրեալն յամի Տեառն 1912,
յ18 աւուր ամսեան Մայիսի, որով յայտ
առնէիք զկազմութիւն Քահանայական
Միութեան, եւ մատուցանէիք զնորին
Կանոնագիր, եւ խնդրէիք առաջի առ-
նել Կրօն. Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչու-
թեան, առ ի քննութիւն եւ ի վաւերա-
ցումն:

Կրօն. Ժողովն ի քնին առեալ զնոյն
Կանոնագիր, հասեցաւ ընդ այն, եւ ո-
րոշեաց վաւերացուցանել:

Ուստի եւ մեր սովին օրհնութեան
կոնդակաւ հաստատեմք զկազմութիւն
Ընդհ. Ժողովոյդ, եւ զմատուցեալն ձէնջ
զկանոնագիր, եւ հրամայեմք ի գործա-
դրութիւն:

ցիրեցեալ որդեակք իմ ի Տէր.

Քաջ իմն գիտէք զաւաղելի կացու-
թիւնն յորում գտանի այժմ Քահանայու-
թիւնն: Գովելի եւ արժանի խրախուսա-
նաց է նպատակ Միութեանդ, որ նկրտի
ազնուացուցանել զդասս Քահանայից,
հրահանգել զնուա ի մտաւորականս, եւ
պատրաստել զշաւիղս նիւթական բար-
ւոք կենաց, եւ այսու յաւելուլ զԹիւ ար-
ժանաւոր քահանայից՝ արդիւնաւէտ եւ
անձնուէր գործովք պատուելոցն, զօ-
րացելոց ի հաւատս եւ ի սէր եւ ի սըր-
բուծիւն:

Անխոնջ վաստակօք եւ եռանդագին
յարատեւութեամբ փոյթ յանձինս կաջիք
հասանիլ ի լրումն նպատակին Միու-
թեանդ, որ ի հանդէս ածցէ զարդիւնս
իւր առյապա: եւ մեք մաղթեմք ի Տեառնէ
առաջնորդել ձեզ, զօրացուցանել ի գոր-
ծքս եւ ի բանս եւ ի կամս հաստատուն,
եւ հայցեմք ի նմանէ տալ ձեզ կար եւ
կարողութիւն, եւ յաջողութիւն յընթա-
ցքս պաշտօնավարութեանդ, ի փառս
Հայ Առաքելական Ս. եկեղեցւոյ, ի պատիւ
Միութեանդ, եւ յօգուտ ժողովրդեան:

Ողջ լերուք, եւ պահպանեալք ի խը-
նամս Տեառն, եւ օրհնեալք ի մէնջ, ամէն:

Պատրիարք Հայոց Թուրքիոյ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊ. ԱՐԵԱՐՈՒՆԻ

Ի 16 Յունիս 1912 ամին Ենոքիաց

ընդ 71 համարան Կոնգրակաց



627.67

ՆՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ

4. ՊՈՒՍՈՅ

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1. — Կ. Պոլսոյ Քահանայից Մի-
ութեան նպատակն է.

Ա. Բարձրացնել Քահանայութեան բա-
րոյական եւ կրթական մակարդակը, և վառ
պահել եկեղեցական կանոնապահութեան
ոգին:

Բ. Միջոցներ խորհիլ իրենց պաշտօնի
սահմանին մէջ ի հոգեւորսն օգտակար ըլ-
լալու ժողովուրդին:

Գ. Հոգ տանիլ քահանաներու նիւթա-
կան վիճակի բարելաւման:

Յօդ. 2. — Քահանայական Միութիւնը
կը վայելէ Կեդր. կրօնական ժողովոյ բա-
րոյական պաշտպանութիւնը. և կը յարգէ
Անոր վերին հսկողութեան իրաւասու-
թիւնը:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 3. — Քահանայից Միութիւնը
ունի իր Ընդհանուր ժողովը և Տնօրէն
խորհուրդը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 4. — Ընդհ. ժողովի անդամ են Պոլսոյ սահմանին մէջ պաշտօնավարող բոլոր քահանայք, որոնք պարտաւոր են ամսական = 5 = հինգ շրշ. բաժնեգին վրձարել. բացառաբար կ'ընդունուին նուազագոյն քաժնեգիներ:

Յօդ. 5. — Ընդհ. ժողովը ունի իր Դիւանը, որ օրինական քուէարկութեամբ կ'ընտրուի:

Յօդ. 6. — Ընդհ. ժողովոյ Դիւանը կը բաղկանայ Ա. և Բ. Ատենապետներէ և Ա. և Բ. Ատենադպիրներէ:

Յօդ. 7. — Ընդհ. ժողովոյ պարտականութիւնն է՝

Ա. Հսկել Տնօրէն Խորհրդոյ գործառնութեանց.

Բ. Քննել իր նպատակին իրագործման և յաջողութեան ծառայող ամէն առաջարկ, և ի հարկին գործադրութիւնը յանձնել Տնօրէն Խորհրդոյ.

Գ. Քննել և վաւերացնել Տնօրէն Խորհրդոյ տարեկան հաշուեցոյցը:

Յօդ. 8. — Ընդհանուր ժողովը կանոնաւորապէս կը գումարուի ամէն երկու ամիսը անգամ մը, ու կը խորհրդակցի Տնիրէն Խորհրդոյ կողմէ Միութեան նպատակներն ի գլուխ հանելու համար ներկայացուած առաջարկներու վրայ: Այս գումարմանց միջոցին Միութեան անդամք

ազատ ենիրենց կողմէ ալ առաջարկներ խորհրդակցութեան ենթարկելու, պայմանաւ որ նախապէս գրաւոր կերպով Դիւանին ներկայացուած, և յարմար դատուած պարագային օրակարգ անցած ըլլայ:

Յօդ. 9. — Ընդհ. ժողովը կը շարունակէ իր նիստերը, մինչև որ ներկայացուած առաջարկներու մասին իր խորհրդակցութիւններն աւարտէ:

Յօդ. 10. — Երկամսեայ սովորական նիստէն առաջ Ընդհ. ժողովը բացառաբար ի նիստ կը հրաւիրուի՝ Տնօրէն Խորհրդոյ կողմէ ցոյց տրուած ստիպողութեան պարագային, և կամ Միութեան եօթը անդամոց կողմէ պատճառաբանեալ գրաւոր խնդրանաց վրայ:

Յօդ. 11. — Ընդհ. ժողովոյ Դիւանի պաշտօնը կը տեւէ երկու տարի. դադարեալ դիւանի անդամք յաջորդ շրջանի համար վերընտրելի չեն:

Յօդ. 12. — Ընդհ. ժողովը ամէն տարեշրջանի Տնօրէն Խորհրդոյ համարատուութիւնը քննելէ և հաստատելէ յետոյ, յատուկ տեղեկագրով կը մատուցանէ Ազգ. Ազգ. Վարչութեան Արօն. ժողովոյ ի վաւերացումն:

Յօդ. 13. — Ընդհ. ժողովը կը քննէ Տնօրէն Խորհրդոյ գործառնութեանց ու մատակարարութեանց մասին ներկայացուած

գանգատները. և եթէ մեծամասնութեամբ
հարկ տեսնէ՝ կը լուծէ զայն, և նոր Տնօրէն
Խորհրդոյ ընտրութիւն կը կատարէ :

Յօդ. 14. — Ընդհ. Ժողովը մասնաւոր
տեղեկագրով մը կեդր. կրօն. Ժողովոյ կը
ներկայացնէ Տնօրէն Խորհրդոյ անդամները :

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Յօդ. 15. — Տնօրէն Խորհուրդը կ'ընտ-
րուի Ընդհ. Ժողովէն և կը բաղկանայ ինը
անդամներէ :

Յօդ. 16. — Տնօրէն Խորհուրդը իր մէջէն
կ'ընտրէ իր Գիւանը, որ կը բաղկանայ մէկ
Ատենապետէ, մէկ Ատենագլխիւրէ, մէկ Գան-
ձապետէ և մէկ Համարակալէ :

Յօդ. 17. — Տնօրէն Խորհուրդը կը դու-
ժարուի անխափան ամիսը երկու անգամ,
ի հարկին կրնայ իր նիստերը յաճախել :

Յօդ. 18. — Տնօրէն Խորհրդոյ պաշ-
տօնն է՝

Ա. Միութեան նպատակին իրագործման
մասին միջոցներ խորհիլ, Մատենագարան
մը հաստատել, քահանայից զարգացման
նպատակով գիրքեր և լրագիրներ գնել,
կրօնա-բարոյական հրատարակութեանց
ոյժ տալ, Լսարաններ կազմակերպել և ըն.

Բ. Հսկել Պոլսոյ ընդհանուր քահա-
նայից բարոյական ընթացքին և անոնց
պարտականութեան վրայ :

Գ. Պաշտպան կանգնիլ քահանայից բա-
րոյական և նիւթական իրաւունքներուն .

Դ. Միջոցներ խորհիլ քահանայից նիւ-
թականը հաստատուն հիման վրայ գնելու .

Ե. Ընծայացունելու ընտրութեան պա-
րագային հոգ տանիլ արժանաւորներու
յաջողութեան, և ի հարկին դիմումներ ը-
նել կեդր. կրօն. Ժողովոյ մօտ .

Զ. Երկու կամ աւելի քահանայից մէջ
ծագում մ առած անհամաձայնութիւնները
իրաւախօսութեամբ լուծել .

Է. Քահանայից Միութեան հասոյթներ-
ը արդիւնաւորել և կանոնագրի տրու-
մագրութեան համաձայն մատակարարել .

Ը. Գաւառական քահանայական Միու-
թեանց հետ յարաբերութիւն մշակել և
ոյժ տալ Գաւառ. Միութեանց կազմա-
կերպութեան .

Թ. Միութեան նպատակին իրագործման
սատարող ձեռնարկներու, ինչպէս նաև քա-
հանայից ընդհանուր իրաւանց մասին օ-
րինագիծեր պատրաստել և Ընդհ. Ժողո-
վոյ վաւերացման ենթարկել :

Յօդ. 19 — Տնօրէն Խորհուրդը՝ ան-
պատշաճ ընթացքի մը մէջ գտնուող քա-
հանաները կարելի միջոցներով ի կարգ կը
հրաւիրէ, և անսաստողներու մասին կեդր.
կրօն. Ժողովոյ ուղարկութիւնը կը խնդրէ .

Յօդ. 20. — Տնօրէն Խորհուրդը՝ Մայր
Գիւանի կ'առաջարկէ Ընդհ. Ժողովը ի նիստ

հրաւիրել, ամէն անգամ որ հիմնական ու կարեւոր խնդիր մը կը ներկայանայ իր քննութեան, և կամ իր իրաւասութեան սահմանէն վեր պարագայի մը առջեւ կը գտնուի:

Յօդ. 21. — Աւանց բանաւոր պատճառի յաջորդաբար երկուս բացակայ գտնուող Տնօրէն Խորհրդոյ անդամ մը հրաժարեալ կը համարուի. և Ընդհ. Ժողովը անոր ակդ նոր մը կ'ընտրէ, որ կը լրացնէ իր նախորդին շրջանը:

Յօդ. 22. — Տնօրէն Խորհրդոյ նիստերը անդամոց ամբողջութեան 2/3ին ներկայութեամբը օրինաւոր և որոշումները գործադրելի են:

Յօդ. 23. — Տնօրէն Խորհուրդը պարտաւոր է տարին մի անգամ իր գործառնութեանց համարատուութիւնը ներկայացնել Ընդհ. Ժողովոյ:

Յօդ. 24. — Տնօրէն Խորհրդոյ պաշտօնավարութեան շրջանը երկու տարի է. դադարեալ Խորհրդոյ անդամը վերընտրելի չեն յաջորդ շրջանին համար:

Յօդ. 25. Օրինական շրջանէն առաջ հրաժարեալ Տնօրէն Խորհրդոյ անդամոց համար ալ գործադրելի է 24րդ յօդուածի տրամադրութիւնը:


Յօդ. 26. — Տնօրէն Խորհուրդը հաւաքաբար պատասխանատու է Ընդհ. Ժողովոյ առջև, իր բարոյական գործառնու-

թեանց և նիւթական մատակարարութեան համար:

Յօդ. 27. — Ուէ կերպով ամբաստանուած և հրաժարեցուցուած Տնօրէն Խորհրդոյ անդամք չեն կրնար Գիւանի կամ Խորհրդոյ պաշտօնի կոչուիլ, մինչև որ իրենց անպատասխանատուութիւնը կամ անմեղութիւնը չհաստատուի:

Յօդ. 28. — Տնօրէն Խորհուրդը ներկայ կանոնագրով վայելած իրաւասութեան սահմանին մէջ հասոյթները օգտակարապէս պիտի գործածէ՝ 18րդ յօդուածի Ա. պարբերութեան պարտագրութեանց, ինչպէս նաև զիւանական պէտքերու, անհրաժեշտ սպազրութեանց և հըրատարակութեանց:

Յօդ. 29. — Տնօրէն Խորհուրդը իրեն յատուկ կնիքը ունի:



ՀԱՍՈՅԹՔ

Յօդ. 30. — Քահանայական միութեան հասոյթները կը կազմեն՝

Ա. — Անդամակիցներու բաժնեգիները.

Բ. — Կամաւոր նուէրները.


Գ. — Յանուն Միութեան ըլլալիք կըտակները.

Դ. — Տնօրէն Խորհրդոյ նախաձեռնութեամբ բացառիկ հասոյթներ:

Յօդ. 31. — Միութեան ընդհանուր

Հասուծից 2/3 ը տրամագրելի է Տնօրէն Խորհրդոյ, 18 և 28 յօդուածներու տրամագրութեանց համաձայն նպատակին գործածուելու համար, իսկ մնացեալ 1/3 մասը ի պահ կը մնայ պահչով գրամատան մը մէջ՝ իր դիւանին և օրուան Պատրիարքին անուան:

Յօդ. 32. — Պահեստի գրամի գումարը երբ 5000 զըշ. ի հասնի, Տնօրէն Խորհրդոյ առաջարկով Ընդհ. Ժողովը կ'որոշէ գործածելու եղանակը՝ ի նպաստ Միութեան նպատակին:



ՊԼՏՈՒՈՅ ԱՆԳԱՄՔ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՔ

Յօդ. 33. — Միութեանս պատուոյ Անգամ կը նշանակուին՝ միանուագ գոնէ = 1000 = հազար զըշ. ի նուիրատու պմէն ազգայինք, եկեղեցական թէ ա խարհական:

Յօդ. 34. — Բարերար կը համարուին՝ Միութեանս միանուագ գոնէ = 5000 = հինգ հազար զըշ. նուիրող և կամ մշտնջենական կտակով տարեկան գոնէ = 500 = զըշ. ի հասոյթ ապահովող ամէն աղբայինք, որոնց փափաքանաց համաձայն Միութիւնը տարեկան հոգեհանգստեան պաշտօններ կը կատարէ:



ԸՆԳՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 35. — Քահանայից Միութեան Կեդրոնատեղին է Մայր Եկեղեցւոյ Քա-

հանայից Խորհրդարանը. ի հարկին կարելի է այլուր հաւաքուիլ կամ փոխադրուիլ, եթէ միջոցները ներեն:

Յօդ. 36. — Միութեանս անդամք ո և է պատճառաւ իրաւունք չունին իրենց վճարած ամսաբաժիններէն կամ Միութեան գոյքերէն ո և է բաժին պահանջելու:

Յօդ. 37. — Քահանայական Միութիւնը իր գոյութիւնը կը պահէ, մինչև որ անդամոց թիւը քսանի իջնէ. իսկ երբ բացարձակապէս շարունակութիւնը անկարելի դառնայ, Միութեան ամբողջ գոյքերը ու պահեստի կամ պատրաստի գրամները, ինչպէս նաև կտակները տրամագրելի կ'ըլլան Կեդր. Կրօնական Ժողովոյ, յարմար դատուած նպատակի մը գործածուելու համար:

Յօդ. 38. — Ներկայ Կանոնագիրը երկու տարի վերջ միայն վերաքննելի է. այդ ժամանակամիջոցէն առաջ ո և է փոփոխութեան կամ յաւելման առաջարկ՝ Միութեան անդամոց մեծամասնութեան հաւանութեան պէտք է արժանանայ:

Յօդ. 39. — Սոյն Կանոնագիրը, ինչպէս նաև ապագային յաւելեալ կամ փոփոխեալ ո և է յօդուած գործադրելի է՝ Կրօնական Ժողովոյ վաւերացման արժանալէ յետոյ:



Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական
Ժողովը յետ քննութեան վաւերացնելով
սոյն Կանոնագիրը, կը ներկայացնէ Ամեն.
Ս. Պատրիարք Հօր՝ ի հաստատութիւն,
Սրբնութեան Կոնդակաւ:

Կեդր. Կրօնական Ժողովոյ
Բ. Ատենադպիր Ատենապետ
Ս. ք. Բ. Էպիսկոպոս Եղիշէ Արքեպ. Գուրեան
1 Յունիս 1912

Եւ մեք՝ ըստ որոշման Կրօն. Ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան, հաստատելով Մայ-
րաբաղամիս Բահանայական Միութեան զայս
Կանոնագիր, հրամայեմք ի գործադրութիւն:

Պատրիարք Հայոց Թուրքիոյ
ՅՈՎ. Հ. ԱՐՔԵՊ. ԱՐՇԵՐՈՒՆԻ
1 Յունիս 1912



